



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

„ \_\_\_\_\_ „ \_\_\_\_\_, 2022թ

Հեռ. (+374) 0281 2 25 22

N \_\_\_\_\_

<<ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ>> ՀԿ-Ի  
<<ՀԵՏՔ>> ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ Գ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

## Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի դեկտեմբերի 9-ի գրության՝ տեղեկացնում ենք.

1. Ադրբեջանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 13-ին իրականացրած ռազմական գործողությունները հիմնականում ուղղված են եղել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի դեմ:

Սահմանամերձ տարածքներում ամբողջությամբ այրվել են 1000-1100 հա պետֆոնդի արոտավայրեր (վնասի չափը հաշվարկվել է մոտ 18 800 000 դրամ), ինչպես նաև՝ համայնքային սեփականություն հանդիսացող 60-65 հա խոտհարքեր (վնասը կազմել է մոտ 9 760 000 դրամ): Վնասներ կրել են նաև առանձին գյուղացիական տնտեսություններ՝ անկել են երկու ձի, յոթ խոշոր եղջերավոր անասուններ, վնասը կազմել է մոտ 2 560 000 դրամ:

2. Թշնամու կողմից թիրախավորվել է հիմնականում Ջերմուկ քաղաքը, որտեղ գյուղատնտեսական աշխատանքներով (բերքահավաք, աշնանացան) զբաղվողներ չկան:

3. Սեպտեմբերի 14-ին ռազմական գործողությունների հետևանքները տեղում ուսումնասիրելու և պատճառված վնասները գույքագրելու համար մարզպետի հանձնարարությամբ ձևավորվել է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի համապատասխան վարչությունների մասնագետներ և Ջերմուկ համայնքի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մշտական հանձնաժողովի>> անդամները: Կատարվել է մանրամասն գույքագրում, արդյունքները ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. Քանի որ Ջերմուկ համայնքը գտնվում է բարձր լեռնային գոտում՝ բնակլիմայական պայմանները նպաստավոր չեն հացահատիկային մշակաբույսերի մշակության համար, ուստի Ջերմուկ քաղաքում թշնամու կողմից թիրախավորված լինելու պատճառով չմշակվող հողամասեր չկան :

 Недействительная подпись

X *Ք. Կրիգորյան*

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հարգանքով՝**

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն

Կատարող՝ Գ. Խաչատրյան Հեռախոսներ 028123050, 077992395